

19778



EDITION "NUVAK",
Hagop Uvezian
B. P. No 517
Beyrouth

CHANSONS ARMÉNIENS

Transcrits par H. UVEZIAN

ՀԱՅՆԱԳՐԵԱԼ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐԹ
65 ԲՆՏԻՐ ԵՐԳԵՐ



Միաձայն, Բազմաձայն եւ Գաեմակի համար
ՄԻԱՅՈՅ

ԵՐԱԺԵՏՆԿԱՆ ԵՒ ՀԱՅՆԱԳՐԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ

Աւիստամիւնց՝ Ե. ԷՎԷԶԵԱՆ
1928

891.99-192
2-22



EDITION „NUVAK”
Hagop Uvezian
B. P. No. 517
Beyrouth

Chansons Armenienne

Transcritès par H. UVEZIAN

ՀԱՅՆԱԳՐԵԱԼ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Բ. ՄԱՍ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆՏԻՐ
ԵՐԳԵՐ

Աշխատասիրեց Յ. Իսկիզբեկ
1927

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւ	Էջ		
5. Ախ իմ ճամբէն	11	27. Ես սիրեր եմ	48
7. Արի համով	14	6. Լսիր ով վարպետ	12
8. Արեւը նոր ծագել ա	15	15. Ծիտը ծառին	26
10. Ասում են ուռին	17	25. Համբարցումն եկաւ	44
13. Ալագեազ էջմիածին	22	3. Մարգ արարածը	8
17. Ամպի տակից	30	12. Մնացեալ բարեաւ	20
20. Արշալոյսը նորէն բացաւաւ	34	14. Պալատից դուրս եկաւ	24
23. Ահա ելաւ լուսինն	40	1. Սիրուհիս	3
24. Աղջի բախտաւոր	42	11. Սեւորակ աչեր	18
2. Գնաց գնաց	6	18. Սիրուն մանկիակ	32
4. Դանդառուում են	10	21. Սիրեցի եարբոս տարան	36
9. Եկ իմ սրինգ	16	22. Սիրուն թռչնիկ	38
19. Եար ունէի	33	26. Ստորելով փորձեցի	46
		16. Վերջին վարդ	28

1. ՍԻՐՈՒՀԻՍ

Andante aimable.


Գրի առաւ Յ. Ի.



Սիրուհի — « քեզ համար կեանքս կէս եղաւ



Քու ա — նու — նրդ էր մի — այ — — — ն Որ ինձ կեանք տր — — — ւաւ



Մահի — չա — կ, նունուֆար, վարդ, շուշան, մե — — — խա — — կ



Ունիւն են . . . ա — ու — ջի « Իմ անգին հոգ — եակ,

Allegretto con animo.



Սիրունիս քեզ համար
Կեանքս կէս եղաւ
Քո անունդ էր միայն
Որ ինձ կեանք տրւաւ:

Մանուշակ, նուրու ֆար
Վարդ շաշան մեխակ
Ոչինչ են տաջիս
Իմ անգին հոգեակ:

Աղջի՛ քո սիրոյն
Շրքեղ անունովդ
Սևորակ աչքով
Երկնածիր յօնքով:

Այրուի քո սիրտը
Այրեցիր հոգիս
Մաշուի քո սիրտը
Մաշեցիր հոգիս:

Այս տեղ եմ ես լըսում
Քու քաղցրիկ ձայնը
Վարդ կորցրած բլբուլի
Երգում ես երգը:

Բայց ամսոս չեմ կարող
Գալ քեզ տեսնելու
Իմ սրտին վառ սիրոյն
Կարօտն առնելու:

Այն օր վաղը
Վաղը ասելով
Ու լոկ խոստումներ
Ինձի առնելով,

Այրուի քո սիրտը
Այրեցիր հոգիս
Մաշուի քո սիրտը
Մաշեցիր հոգիս:

2- ԳՆԱՑ ԳՆԱՑ

Andante.

Գընա՛ց, գընա՛ց, սիրուհիս գնաց,
 Նը--րա պէս քաղ-ցրիկ էլ ո՞վ կուեննայ,
 Գե -- ղե--ցիկ էր նա, հրա--շա--լի էր նա,
 Նը -- րա պէս սի -- րուն էլ ո՞վ կուեննայ:

= 6 =

1. Գնա՛ց, գնա՛ց, սիրուհիս գնաց,
 Նրա պէս սիրուն էլ ո՞վ կուեննայ.
 Գեղեցիկ էր նա, հրաշալի էր նա,
 Նրա պէս սիրուն էլ ո՞վ կուեննայ:
2. Գնա՛ց, գնա՛ց, զարիբս գնաց,
 Սրտիս մէջ թողեց վերքեր բլբաւոր,
 Սգի մէջ մնացի օրս միշտ լաւով,
 Հանգիւստ խոով, ա՛խ ուր ես չու՛տ եկ. . .
3. Ա՛խ զարիբ, մահս մօտ է չու՛տ եկ
 Թոյնը գրպանումս իմ դատաւճիռ,
 Շուտ դու զուրս արի, սիրահար արի՛
 Սանամիդ փրկիր, էլ դու չես գտներ. . .

= 7 =

3. ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԸ

Moderato.

Մարդ արարածը այս աշխարհում, Պէտք է որ նա միշտ չարչարուի,
 Ու սրա փոխարէն իւր կը նստից Մի լաւ ծեծ էլ պէտք է ուտի:
 Բայց արի տես, որ մենք մարդիկըս կը նոյն կապրի—ղը պիտ տա—նենք:
 Եւ այնուհետեւ պէտք է լռենք, Ու այսպէս չարչարուենք:

1. Մարդ արարածը այս աշխարհում,
 Պէտք է որ նա միշտ չարչարուի,
 Ու սրա փոխարէն իւր կնոջից
 Մի լաւ ծեծ էլ պէտք է ուտի:
 Բայց արի տես որ մենք մարդիկս
 Կնոջ կապրիղը պիտ տանենք,
 Եւ այնուհետեւ պէտք է լռենք
 Ու այսպէս չարչարուենք:

2. Իմ ժանէտս թէպէտեւ խիստ է
 Բայց շատ սիրում եմ ես նրան,
 Իմ վատտակս նա չոայլում է
 Եւ ինձ անօթի է ձգում:
 Եւ այնուհետեւ եւ ոչ մի խօսք
 Չեմ կարողանում ես ասել,
 Երբ սկսում եմ պոռալ վրան
 Իսկոյն լալիս է ան:

4. ԳԱՆԳԱՏԻՈՒՄ ԵՆ

Andante.



Allegro.



2. Ինք թող խմէ միշտ բաժակ դառնութեան
Ու հայթայթէ կեանք ուրախ իր կնկան.

3. Ով կամենում է ապրիլ երջանիկ
Բոլոր հոգւով թող սիրէ իւր կնիկ.



5. ԱՒ ԻՄ ՃԱՄԲԵՆ




2. Դու՛մանն եկաւ շուրջս պատեց
Նաշխուն հաւքերն ին՞չ եղան,
Դարտը եկաւ սիրտս պատեց
Ին՞ ալ վարդերս ին՞չ եղան:

3. Խառ հաւքերը ծորում կորան,
Ագռաւ վրան կը զըռա.
Սիրուս ալ վարդ վարդեր թռուման,
Բիւրբիւլն անթե կը սգայ:

6. ԼՍԻՐ ՈՎ ՎԱՐՊԵՏ

(Աշուղ Ղարիպէն)



1. Լը—սի՛ր ո՞վ վարպետ, հար-ցընեմ մի բան, Ե—րաժշտութիւն— նը ո՞վ հը նա ըեց,



Ու զիղ պատմութիւնն աշխարհի ծագման, Ո՞վ գ ըեց, ամփո փեց և շաբադ ըեց,

2. Ինչ է իմաստութեան սկիզբն արդար,
Ինչ լոյս է վառվում, անչէջ անխաւար,
Ինչ անմեղ, որ մահն առաւ մեղ համար,
Այն լապտերի լոյսն մէկ անգամ մարեց:

3. Ինչ գօտի վերան ունի եօթը դոյն,
Ո՞վ է կապում այդ գօտին միւսնոյն.
Այն ինչ բան առաջ մեղր է յետոյ թոյն,
Ինչ բժիշկ էր որ այդ բան նշմարեց:




4. Ահա՛ բացատրեմ խօսքերիս միտքը,
Երաժշտութիւնն Յովրաշն հնարեց,
Ուղիղ պատմութիւնն աշխարհի ծագման,
Մովսէսն ամփոփեց և շաբադ ըեց:

5. Տիրոջ վախն զխտութեան սկիզբն արդար,
Արեգն է վառվում անչէջ անխաւար,
Քրիստոսն էր որ մահն առաւ մեղ համար,
Երբ որ խաչուեց նա, արիւն խաւարեց:

6. Աղեղնակն վերան ունի եօթը դոյն,
Այդ երկինքն է, որ կապում է միւսնոյն,
Այն խաղողն առաջ մեղր է, յետոյ թոյն,
Փարձուած մարդն էր որ այդ բան նշմարեց:

ԱՇՈՒՂ ՋԻԻՍՆԻ


7. ԱՐԻ ՀԱՄՈՎ



2. Ով քեզի լեզի պարզեի,
Դուն տուր չաքար Սայեաթ-նովա:
Ղաատ արա շուշէդ չը ճարթին
Շախով շուղով Սայեաթ-նովա:

3. Ամէն մարդի մարդ չիմ ասում,
Ամէն եարի եար չիմ ասում,
Շահով ջանով եար իմ ուղում,
Փառք ու պատուով Սայեաթ-նովա:

8. ԱՐԵԻԸ ՆՈՐ ԾԱԳԵԼ Ա



2. Աչերիդ եմ կարօտել,
Դժի նման եմ դառել:
Շաղֆով շողֆով իմ եարը,
Բոյով սոյով իմ եարը:


3. Հազար տղայ ինձ ուղի,
Ես ուրիշին չեմ ուղի:
Շաղֆով շողֆով իմ եարը,
Բոյով սոյով իմ եարը:



4. Դարդը սրտից չէի հանում,
Քեզ մտահան չէի անում:
Շաղֆով շողֆով իմ եարը,
Բոյով սոյով իմ եարը:



9. ԵԿԻՄ ՍՐԻՆԳ



Ե՛կ իմ սր-բինգ, իմ բա-րե-կամ սր-էագին, Նի -- հար շրթներդ, ո՛հ ե -- բերուն, Գի՛ր



դալ- կա--հար իմ շրթ-նե-րուն, եր-գեմք ու լամք, լամք ու եր-գեմք սրս -- մա -- գին:

Լա՛ց, զի լոկ քեզ գրսի հասորն իմ արսին.
Դու բարունակ էիր կանաչ,
Երբ մի անգութ ձեռք աննանաչ
Կսեց զքեզ, անշատեց մայրն ու ճողին,

Եւ քոյլ տուր որ լանջիդ վրայ գալարուս
Ծակեր բացուին՝ վերք երկաթի.

Թող այդ վիրաց, բար կարթի
Արին, բողոք, միակ բսփոփ վիշտերուդ:

Թող երգերն, դառնակ, հնար գեղգեղեն

Յեկիդեցուք, ի գինեսուն,

Աղօթք ու սլար քուչին, խայտան.

Թող այլ վայլեն հաճոյք մարմնոյ հոգեղն.

Ա՛խ, իմ արինգ, աշխարհ յոյսով քո՛ղ բերկրի,


Թող բաղդն անոր ժպտի յոյսին,

Ե՛կ ես ու դուն ի միասին


Լանք ու երգեմք, մեր բաժինն այս է յերկրի:

10. ԱՍՈՒՄ ԵՆ ՈՒՌԻՆ


ANDANTE.



Ա-սում են՝ ու-ռին՝ Աղջիկ էր ինձ պէս, Մընում էր եա -- րին, Ու չե-կաւ նա տես.
Խեղ-նր դո-ղա-լով՝ Ան-յոյս կը-ռա-ցաւ, Թար-թիչ չո-րա -- ցաւ, Ու-ռե-նի դար-ձաւ.



Ջը-րե-րի վը-րայ Գը-լու-խը կա-խած՝ Դեռ դողում է նա Ու լա-լիս կա-մաց,



Ու ամ-բողջ տա-րին մի միտք է ա-նում, Թէ եա-րբ եա -- րին Ո՛նց է մո -- ռա-նում:

Ասում են ուռին՝ աղջիկ էր ինձ պէս,
Մընում էր եարին, ու չեկաւ նա տես.
Խեղնր դողալով՝ անյոյս կըռացաւ,
Թարթիչ չորացաւ, ուռենի դարձաւ:

Ջրերի վրայ գըլուխը կախած՝
Դեռ դողում է նա ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին մի միտք է անում,
Թէ եարբ եարին ո՛նց է մոռանում. . . :

11. ՍԵՒՈՐԱԿ ԱԶԵՐ

Moderato.

p Սեւորակ աւեր, սիրունիկ աւեր, Հրաշալի աւեր աւեր մութ գիշեր.

f

f Երբոր ձեզ տեսայ, հանգրստից զրկուայ. Զեղանով միայն աշխարհ մոռացայ.

pp Երբոր ձեզ տեսայ, հանգրստից զրկուայ. Զեղանով միայն աշխարհ մոռացայ.

p Այդ աւերը սեւ, ինչպէս կրակ կայրեն դէպի միայլաշխարհ նրանք ինձ կը կանչեն:

f

f Ուր տիրում է սէր՝ Հոն փայլուն է կեանք ուր չըկայ տանջանք հոն կայ սէր յարգանք.

p Ուր տիրում է սէր՝ Հոն փայլուն է կեանք ուր չըկայ տանջանք հոն կայ սէր յարգանք.

pp

f չը տեսնէի ձեզ չէ՝ ի տանջէի ես. Կ'ապրէի անսիրտ աւառ ու անվիշտ.

f *ff*

f Իսպառ ինձ մաշցիք՝ աւեր սեւորակ, եւ երջանկութիւնս անդարձ դուք տարաք:

p *pp* *Rit . . .*

12. ՄՆԱՅԵՍ ԲԱՐԵԱԻ

ANDANTE CON MOTO.

Մը-նա — ցես բար — եաւ, ինչպէս թո-ղում քեզ. Ար-ցունք ինձ բա — ժին է Զի սիրտս է սիրակէզ: Պանդըխտութեան մէջ Պիտի յիշեմ ըզ-քեզ. Ուր որ լինիմ և երբ Դուն կեանքս ես հրեշտակ հեզ: Պանդըխտութեան մէջ Պիտի յիշեմ ըզ-քեզ. Ուր որ լինիմ և երբ Դուն կեանքս ես հրեշտակ հեզ:

1. Մընացես բարեաւ,
Ինչպէս թողում քեզ,
Արցունք ինձ բաժին է
Զի սիրտս է սիրակէզ:
Պանդըխտութեան մէջ
Պիտի յիշեմ ըզքեզ.
Ուր որ լինիմ և երբ
Դուն կեանքս ես հրեշտակ հեզ:

2. Մընացես բարեաւ,
Ով իմ պաշտելիս.
Թէև ես կերթամ բայց
Ոհ մի մոռանար զիս:

Ու երազներուս մէջ,
Քու յիշատակներով.
Պիտի մըխիթարուիմ
Միշտ կոյս սիրազորով:

3. Մընացես բարեաւ,
Ով իմ հրեշտակ.
Անմահ է սէրդ յաւէտ
Իմ այրած կրծքիս տակ.
Վերջին համբոյր մը սոսկ.
Այս է խնդիրքս յետին
Շնորհէ որ թող մարի
Գոնէ կըրակն իմ սրտին:

4. Ոհ երթաւ բարեաւ
Աստուած պաշտպան մեզ
Երկինք վըկայ որ ես
Միշտ պիտ սիրեմ ըզքեզ:

Փոխան քու սուրբ սիրոյդ
Համբոյր մը ինչ է որ,
Ես քուկդ եմ սիրելիս
Առ առ սիրտս բոլոր:

13. ԱԼԱԳԵԱԶ ԷԶՄԻԱԾԻՆ

ANDANTE.



Ա — լագ եագ բար — ձրր տեղ ա, եա — — — — — ր,



Ես սի — րեցի, վայ, խալ — խըր տա — րաւ իմ սի — րած եա — րը,


Moderato.




Քե — զի մեռ — նիմ էջ — մի — ա — ծին, ա — զաս ա — նող Աստուածածին.



Նա — — — — — նե՛, նա — — — — — նե՛, նա — — — — — նե՛, նա — — — — — նե ջան:



Նա — նե — ի դարդեր տա — րե — րով է, նա — նե — ի դարդեր տա — րե — րով է,



Նա — — — — — նե՛, նա — — — — — նե՛, նա — — — — — նե՛, նա — — — — — նե ջան:



Էր — լում եմ վառ — լում եմ չեմ զր — նա նա — նե ջան:

Ալագեազ բարձր տեղ ա, եար,
 Ես սիրեցի, վայ, խալիս տարաւ իմ սիրած եարը,
 Քեզի մեռնիմ էջմիածին,
 Ազաս անող Աստուածածին,
 Նանե՛, նանե՛, նանե՛, նանե՛ ջան,
 Նանու դարդեր տարերով է,
 Նանե՛, նանե՛, նանե՛, նանե՛ ջան,
 Էրում եմ, վառում եմ,
 Չեմ զրնա նանե՛ ջան:

Ջուրք հիւանդի դեղ ա, եար.
 Թէ որ չառնեմ, վայ, ես կը մեռնիմ իմ անուշ եարը:
 Քեզի մեռնիմ էջմիածին,
 Ազաս անող Աստուածածին,
 Նանե՛, նանե՛, նանե՛, նանե՛ ջան,
 Նանու դարդեր տարերով է,
 Նանե՛, նանե՛, նանե՛, նանե՛ ջան,
 Էրում եմ, վառում եմ,
 Չեմ զրնա նանե՛ ջան:

14. ՊԱԼԱՏԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ

Andante.

Պա-լա - տից դուր . . . ս ե - - - կաւ մի կոյս,

Զար-բիր, որ - սորդ, որ - - - սրդ ե - կաւ,

Ողջ աշխար - - - հին սա - րա - - ծե - - - ց

լոյս, Զարբիր, որսորդ, որ - - - սրդ ե-կաւ:

1. Պալատից դուրս եկաւ մի կոյս,
Զարբիր, որսորդ, որսդ եկաւ,
Ողջ աշխարհին տարածեց լոյս,
Զարբիր, որսորդ, որսդ եկաւ:

2. Սեւ մազերը երեսին բափած.
Կարծես երկինք եւ ամպամած.
Ասղը երկնից դառն եր իջած.
Զարբիր, որսորդ, որսդ եկաւ:

3. Պալատի մէջ ունեւ փափափ,
Լսել մի փչ երգ ու նուագ.
Քեզ ե զալիս արագ արագ,
Զարբիր, որսորդ, որսդ եկաւ:

4. Մօտը նստաւ շատուանի,
Առնողին հազար երանի,
Տեսնողի խելքը կը տանի,
Զարբիր, որսորդ, որսդ եկաւ:

«Աշուղ Ղարիբ»-էն ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻ

15. ԾԻՏԸ ԾԱՌԻՆ

(ԾԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ)

Allegretto.

Յ. ԻՒՎԷՋԵԱՆ

Ծի-սը ծա-նին ծլ-ւու-լում է ծիւ ծիւ ծիւ ծիւ ծիւ ծիւ ծիւ ծիւ

Ծի — — սը ծա — — նին ծլ — — ւու լում է ծիւ ծիւ ծիւ ծիւ

Բա-զէն գլ-խուն պր-սրս-ւում է սիւ սիւ սիւ սիւ սիւ սիւ սիւ սիւ

Ծիւ ծիւ ծիւ ծիւ քա — — զէն — — գլ — — խուն պր — — սրս — — ւում է սիւ

= 26 =

Բա-զէն փա-խաւ, բա-զէն քր-նաւ ի՞նչ լաւ է - դաւ հէյ հէյ հէյ հէյ հէյ

Բա-զէն փա-խաւ, բա-զէն քր-նաւ ի՞նչ լաւ է - դաւ հէյ հէյ հէյ հէյ հէյ հէյ հէյ հէյ

Բա-զէն փախաւ, բա-զէն քր-նաւ, ի՞նչ լաւ է - դաւ, հէյ հէյ հէյ հէյ

Բա - զէն փախաւ, բա-զէն քր-նաւ, ի՞նչ լաւ է — — դաւ հէյ հէյ

Բա-զէն փա-խաւ, բա-զէն քր-նաւ, ի՞նչ լաւ է - դաւ հէյ հէյ հէյ

Բա-զէն փա-խաւ, բա-զէն քր-նաւ, ի՞նչ լաւ է — — դաւ հէյ:

= 27 =

16. ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Andante sostenuto.

Վեր-ջին վարդ, վեր-ջին վարդ, Սի - րա - կա - նիս կուրծքին զարդ,
 Նա քեզ հա-նեց իւր կրծ-քից, Ինձ պար - գե - - լեց վեր-ջին վարդ:
f Մանկուբեան ոսկե ծա - մերն, ան-ցեր են անդառնա-լի,
pp Կո - րած սի-րոյս յի - շա - քակ, Դու ես մի - - այն վեր-ջի ն, վարդ:

=28=

1. Վերջին վարդ, վերջին վարդ,
 Սիրականիս վերջին զարդ,
 Նա քեզ հանեց իւր կրծքից,
 Ինձ պարգեւեց վերջին վարդ:

2. Մանկուբեան ոսկե ծամերն,
 Անցեր են անդառնալի,
 Կորած սիրոյս յիշատակ,
 Դու ես միայն, վերջին վարդ:

3. Գարնան օրերն անցել են,
 Տօբ ամառն է ինձ երում,
 Մի քս սպասում եմ քու քեռքին,
 Դու ամառուայ վերջին վարդ:

4. Երջանիկ կեանքիս օրերը,
 Ցաւ են դառել առաջիս,
 Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
 Միտքս բերիւր, վերջին վարդ:

5. Շաք չի տեսել՝ կր բացուի
 առաջիս սեւ գերեզման,
 Էս աշխարհէս միայն քեզ
 Հետս կ'առնում, վերջին վարդ:

Ք. ՊԱՏԿԱՆԵԱՆ



=29=

17. ԱՄՊԻ ՏԱԿԻՑ


Moderato. (Չափաւոր)



Ամ—պի սա—կից ջուր է գա—լի, Դօժ է սա լի, փրփ—ր—րում՝



Էն ո՛ւմ եարն է նրս—սած լա — լիս Հօն—գուր հօն—գուր են սա—րում:



Ա՛յ պաղ ջը—րեր, զու—լալ ջը—րեր, Որ գա—լիս եք սա—րե—րից,



Դա—լիս անց—նում հանդ ու չօ — լեր, Եարս էլ խը—մե՞ց եղ ջը—րից:

=30=

1. — Ամպի սակից ջուր է գալի,
Դոժ է սալի, փրփրում,
Էն ո՛ւմ եարն է նրսած լալի
Հօնգուր-հօնգուր են սարում:

2. Ա՛յ պաղ ջրեր, զուլալ ջրեր,
Որ գալիս եք սարերից,
Դալիս անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խըմե՞ց եղ ջրից:

3. Եարաք խըմեց, եարաք հովցաւ,
Վառւած սիւսք են եարի,
Եարաք հովցաւ, եարաք անցաւ
Անհուն ցաւը ջիգեարի...:

4. — Աղջի՛, փու եարն եկաւ անցաւ,
Վառւած, տարւած փու սիրով,
Էրւած ջիգեարն եկաւ անցաւ,
Չր հովացաւ պաղ՝ ջրով...:


5. Ամպի սակից ջուր է գալի,
Դոժ է սալի, փրփրում.
Ա՛յ, իմ ազիզ եարն է լալի
Հօնգուր-հօնգուր են սարում:




=31=

18. ՍԻՐՈՒՆ ՄԱՆԻՇԱԿ

Moderato.



Սիրուն մանիշակ ինչու ես տըխրեկ, Կապոյտ աչեքդ ինչու ես փակեկ:



Քեզ ո՞վ նեղացրեց, Ո՞վ քեզ բանաւսեց. Բո ա՛նուշ հոտով ո՞վ չըզմայլեց:

2. Սիրուն մանուկներ,

Դուք ինձ սիրեցէք

Իմ ծաղիկներից

Փնջեր կապեցէք:


Բայց չար մարդկանից

Անգուլթ ձեռներից,

Չը պաշտպանեցիք

Ինձ չ'ազատեցիք:

19. ԵՍՐ ՈՒՆԵԻ




Եսր ունեի քո լույսի ևս, Եստեղի ան ևս ման, Սիրուն ևս քո քաղաքի եր



սիրուն անսահման, Սեւ աչքերով սեւ մազերով սեւ սաքի ևս ման



Բարձր ձայնով երգ եր կանչում քիչ քիչ ևս ման, Այս իմ առաջնապետ,



ինչու ևս ուսուցար ևս չու ևս ուսուցար ես ինձ մառախուղ:

2 Երբ նեղացար դու ինձանից օրքս խառնեց,
Կամաչազարդ պարսիգումքս վարդաքառամեց
Պատեմ կախում իմ ջութակիս քնկալ փրկուեց,
Լացող սիրտս վերջին անգամ արձագանգ տուեց.
Այս քիչ քեզ, քեզ որ քրոջիմ.
Քեզ որ քրոջիմ, իմ ետիս հասնիմ:

20. ԱՐՇԱԼՈՅԱԸ ՆՈՐԷՆ ԲԱՅՈՒԱԿ

ALLEGRETTO.

Ար - շա - ր յ - սը նորէն բաց - ու աւ ամպ ու զամ - պէն ձօն կու - զայ ,

Ար - շա - ր յ - սը նորէն բաց - ու աւ ամպ ու զամ - պէն ձօն կու - զայ :

Ալ ձին ե - կաւ անտէր ե - կաւ : ա'իս իմ եա - րը տուն չե - կաւ :

Ալ ձին ե - կաւ անտէր ե - կաւ : ա'իս իմ եա - րը տուն չե - կաւ :

1 Արշալոյսը նորէն բացուաւ
Ամպու զամպէն ձօն կուզայ,
Ալ ձին եկաւ անտէր եկաւ,
Ա'իս իմ եարը տուն չեկաւ :

2 Լոյսը բացուաւ, դուռը բացուաւ,
Ալ ձին քրտնած ներս ընկաւ,
Սիրուն կուրծքին վէրք ստացած՝
Արիւնթաթախ ներս ընկաւ :

3 Ա'իս սիրուն ձի դու ինձ ասա,
Ո'ր տեղ թողեր իմ եարին,
Ո'ր սարի տակ ո'ր ձորի մէջ
Անտէր թողեր իմ եարին :

4 Ամպեր եկան մութը պատեց ,
Մենակ նրստած կուլամ ես :
Սիրելիիս կորած եարիս
Սուգ ու չիւան , կ'անեմ ես :

21. ՍԻՐԵՑԻ ԵԱՐԸՍ ՏԱՐԱՆ

p

Սի-րե-ցի եա-րըս տա-րա-ն, եա-րա տը-ւին

mf

ու տա-րա-ն. էս ինչ զու-լում աշխարհ է՝

p

Սըր-աա-կից ըն-կեր չի կա-յ, էս ինչ զու-լում

pp

աշ-խարհ է, Սըր-աա-կի-ց ըն-կեր չի-կայ:

1. Սիրեցի եարբա տարան
Եարա տաւին ու տարան
էս ինչ զուլում Աշխարհ է
Սիրտս պոկեցին ու տարան:
2. Ցաւըս մէծ է ճար չըկայ
Ճարը կայ ճարակ չըկայ
էս ինչ զուլում Աշխարհ է
Սըրտակից ընկեր չի կայ:
3. Սարերի վըրով գընաց,
Իմ եարբ խրտով գընաց
Ոչ լոր էր նա ոչ կաքաւ
Չեւիցըս թոտ գընաց:
4. Լաւ օրերս անցան գնացին
Սեւ տարտերս մնացին
էս ինչ զուլում Աշխարհ է
Սո՛ր ցաւերս մնացին:

ANDANTINO.

22. ՍԻՐՈՒՆ ԹՈՉՆԻԿ

P

Սի-րու-ն թո-չ — նիկ, թը-սի-ր զը — նա, Սի-րա-ծ ետ —

f

— րիս բա — — — րեւ ա — — — րա. Ս. — — — առ որ նա՛

p *mf*

աը — — — խոս-ր նըս — — — տած, Գի — — — չե-ր ցե — — — րեկ

Քեզ է ըս — — — սա — — — սում:



1. Սի-րու-ն թո-չնիկ, թո-ի՛ր զնա՛
Սի-րա-ծ ետ-րիս բարեւ ա-րա՛
Առա՛ որ նա՛ տը-խու-ր նստած,
Գի-չե-ր, ցե-րեկ քեզ է սպասում:
2. Սի-րու-ն ետ-ր ջան, ի՞նչ արեցիր,
Սրտու-մս խորու-նկ վէ-րք թողեցիր,
Ա՛խ սիրտըս դու կը-րակ լըցրիր
Սիրտըս ու հոգիս մաշեցիր:



23. ԱՆԱ ԵԼԱԻ ԼՈՒՍԻՆՆ

p

Ա — հա ե — լաւ լուսինն արծաթ Մութ ամ պե րու ստուերէն ,

mf

Ա — հա նաւակն ալ զեզազարդ , Դուրս սա հեցաւ ժայռերէն , Ա —

pp *p*

հուշ հովիկ , փրչէ յաւ չիկ՝ Ու դէպ ինձ բեր բիւր ժիր ալիք , Ա —

p *f*

հուշ հովիկ , փր — չէ յաւ չիկ , Ու դէպ ինձ բեր բիւր ժիր ալիք :

1. Ահա՛ երաւ լուսինն արծաթ
Մութ ամպերու ստուերէն ,
Ահա՛ նաւակն ալ զեզազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն .
Անուշ հովիկ , փրչէ յաւիկ ,
Ու դէպ ինձ բեր բիւր ժիր ալիք .
 2. Նաւակին մէջ իմ զեզուհին
Փառած՝ անփայտ խոտեր տակ ,
Կը ձայնակցի իր կիթառին
Հնչուն ձայնով մի յառակ .
Անուշ հովիկ , փրչէ յաւիկ ,
Ու դէպ ինձ բեր երգն անուշիկ .
 3. Զայնով կ'երգէ սէր ու զգուանք ,
Համակ յազում ու սարսուռ ,
Ալ թո՛ղ աղջիկ երգն ու նաւալ ,
Բոց աչքերը ինձ դարձուր .
Անուշ հովիկ , փրչէ յաւիկ
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ :
- Լ. ՇԱՆԹ

24. ԱՂՋԻ ԲԱՒՏԱԻՈՐ

ANDANTINO.

mf

Աղ - ջի բախ - տա - լոր, եր - նէ՛կ քու սէ - րին,

Քու սա - լի սո - վո - ռ սե սե ա - չե - րին.

Քու սա - լի սո - վո - ռ սե սե ա - չե - րին:

f

Համ - փար - ձում եայ - լա, եայ - լա ջան եայ - լա, Սէր

= 42 =

օ - րեր եայ - լա, եայ - լա ջան եայ - լա, սէր օ - րեր եայ - լա,

եայ - լա ջան եայ - լա:

1 Աղջի բախտաւոր,
Երնէ՛կ քու սէրին,
Քու սարի սովոր
Սեւ սեւ աչերին:

Համբարձում եա՛յլա,
Եայլա ջան եա՛յլա,
Սէր օրեր եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա:

2 Մեռնիմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Սարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունես:

Համբարձում եա՛յլա,
Եայլա ջան եա՛յլա,
Լաւ օրեր եա՛յլա
Եայլա ջան, եա՛յլա:

25. ՀԱՄԲԱՐՑՈՒՄՆ ԵԿԱԻ

Համբարձումն եկաւ Ծաղկունքը ալւան, Զուգեւել են հանդեր
 Նախշուն դորդե ըով, Զուգեւել են հանդեր Նախշուն դորդե ըով,
 Համբարձում եայլա, Եայլա ջան եայլա, Սէր օրեր եայլա,
 Եայլա ջան եայլա, Եայլա եայլա, Եայլա եայլա, Համբարձումն եայլա,
 Եայլա եայլա, Սէր օրեր եայլա:

= 44 =

1. Համբարձումն եկաւ,
 Ծաղկունքը ալւան
 Զուգեւել են հանդեր՝
 Նախշուն դորդերով:
 Համբարձում եայլա,
 Եայլա ջան եայլա,
 Սէր օրեր եայլա
 Եայլա ջան եայլա.
 Եայլա եայլա, Համբարձումն եայլա,
 Եայլա եայլա, սէր օրեր եայլա.

2. Զոյգ զոյգ աղջիկներ,
 Որպէս ծաղիկներ
 Սարերը իջան
 Ծաղիկ քաղելու.
 Համբարձում եայլա,
 Եայլա ջան, եայլա,
 Լու օրեր եայլա
 Եայլա ջան եայլա.
 Եայլա եայլա, համբարձումն եայլա
 Եայլա եայլա, լու օրեր եայլա
 = 45 =

26. ՍՈՎՈՐԵԼՈՎ ՓՈՐՁԻԵՑԻ

ALLEGRETTO.

Սո - վո - րե - լով փորձ - ու ե - ցի , Ա մ է ն ի ց ես ծաղր ու ե - ցի .

Յաւ ու տան ջանք շատ տա - րայ , Բայց վեր ջա - րէս քեզ դը - տայ .

Այն պէս սի - րե - ցի , Սր - ասով սի - րե - ցի , Հոգւով սի - րե - ցի ,

Եար ջան Որ առանց քեզ չեմ ապ - րի :

- 1 Սովորելով փորձուցի ,
Ամէնից ես ծաղրուցի .
Յաւ ու տանջանք շատ տարայ
Բայց վերջապէս քեզ դտայ .
Այնպէս սիրեցի, արժով սիրեցի,
Հոգով սիրեցի, եւր ջան .
Որ առանց քեզ չեմ ապրի :
- 2 Ոչ ոքի չէի տեսել ,
Գարտերբ չէի պատմել ,
Սէրն ինչ է չըգիտէի
Քեզ տեսնելով սիրեցի .
Այնպէս սիրեցի, արժով սիրեցի
Հոգով սիրեցի եւր ջան .
Որ առանց քեզ չեմ ապրի :
- 3 Այն մեր բազմը մեզ օգնեց
Ես ինչ թշուառ կարծեցի .
Բայց մեզ կեանքը ողջունեց
Քեզ տեսնելով սիրեցի .
Այնպէս սիրեցի, արժով սիրեցի,
Հոգով սիրեցի, եւր ջան .
Որ առանց քեզ չեմ ապրի :

27 ԵՍ ՍԻՐԵՐ ԵՍ

ANDANTE.

Ես սի - րե՛ր եմ, մի զոյգ ա - չե՛ր, նր-ման փայլուն աս - ղե --- ռի,

նրանք խոր են, որ - պէս ե --- թե՛ր, նր-ման լուզ-ուող ջը -- ռե --- ռի:

1. Ես սիւրեր եմ մի զոյգ աչեր,
Նրման փայլուն աստղերի.
Նրանք խոր են որպէս երեր.
Նման լուզուող ջրերի.

2. Ես գերուեցայ նոցա փայլից,
Առաւ աշխարհ մոռացայ,
Զմեղ կայսին չեմ կարօտից,
Աւուղ դարձայ երգ հիսեցի.

3 Կանանչ կարմիր փունջ կապեցի
Որ իմ սիրած ետին սամ.
Նա անգութ էր ձեռքէս չառաւ.
Թողուց որ սեւ բախարս լամ:

4 Բայց այն կայսր անտարբեր էր,
Սերս նրան չէր գրաւում,
Իմ վառ սերս լոկ ցրնոր էր,
Նա տեղ չունէր աշխարհում: